«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 18/02

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 06.06.2018թ. ժամը 17:10

Համաձայն 23.05.2018թ-ի և 24.05.2018թ-ի «ՍԳԿԿ» ԻԿԿ-ից ստացված թիվ 612 և 621 գրությունների՝սնանկության գործով կառավարիչներ՝Կամո Հարոյանի,Հենրիկ Մարտիկյանի, Արայիկ Սարգսյանի և Հովհաննես Սողոմոնյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով,կառավարչների վարքագծի վերաբերյալ,կարգապահական վարույթ հարուցելու և գրություններում նշված փաստական հանգամանքների քննության համար՝ ս/թ-ի Հունիսի 06-ին ժամը 17.00-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝

Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
ՍԳ Կառավարիչ՝Կամո Հարոյանը
ՍԳ Կառավարիչ՝ Արայիկ Սարգսյանը
ՍԳ Կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանը

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝

Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձանաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձանաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
ՍԳ Կառավարիչ՝Կամո Հարոյանը
ՍԳ Կառավարիչ՝ Արայիկ Սարգսյանը
ՍԳ Կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

«ՍԳԿԿ» ԻԿԿ-ից 23.05.2018թ-ին և 24.05.2018թ-ին ստացված թիվ 612 և 621 գրությունների հիմքով սնանկության գործով կառավարիչներ՝Կամո Հարոյանի,Հենրիկ Մարտիկյանի, Արայիկ Սարգսյանի և Հովհաննես Սողոմոնյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման,գրություններում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչների վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու և քննության հարցը:

Մինչև օրակարգի հարցի քննարկման անցնելը հանձնաժողովի անդամ՝Հ.Մարտիկյանը առաջարկության համար ձայն վերցրեց և ներկայացնելով այն փաստը,որ օրակարգում ընդգրկված է նաև իր,որպես սնանկության գործով կառավարիչի՝ վարքագծի վերաբերյալ հարցի քննարկում,ինքը որպես հանձնաժողովի անդամ ինքնաբացարկ է հայտարարում և առաջարկեց այս նիստի քվեարկությունները կազմարպել առանց իր ձայնի:

Նիստի մասնակից հանձնաժողովի անդամները քննարկեցին ինքնաբացարկը,ընդունեցին այն ճիշտ և նիստի վարման կանոնակարգին համապատասխան: Հանձնաժողովի նախագահն առաջարկը դրեցին քվեարկության՝

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ- «ՍԳԿԿ» ԻԿԿ-ից 23.05.2018թ-ին և 24.05.2018թ-ին ստացված թիվ 612 և 621 գրությունների հիմքով սնանկության գործով կառավարիչներ՝Կամո Հարոյանի,Հենրիկ Մարտիկյանի, Արայիկ Սարգսյանի և Հովհաննես Սողոմոնյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, գրություններում և կից փաստաթղթերում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչների վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու և փաստական հանգամանքների քննարկման համար, ս/թ-ի Հունիսի 06-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստով ընդունել հանձնաժողովի անդամ՝Հենրիկ Մարտիկյանի ինքնաբացարկը և սույն նիստում քվեարկությունները կազմակերպել առանց հանձնաժողովի անդամի քվեարկության ձայնի իրավունքի:

ԼՍԵՑԻՆ՝
Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝ Տիգրան Հարությունյանը ներկայացրեց,որ «ՍԳԿԿ» ԻԿԿ-ից 23.05.2018թ-ին և 24.05.2018թ-ին ստացվել է թիվ 612 և 621 գրությունները և կից փաստաթղթերը, սնանկության գործով կառավարիչներ՝Կամո Հարոյանի,Հենրիկ Մարտիկյանի, Արայիկ Սարգսյանի և Հովհաննես Սողոմոնյանի վերաբերյալ,խնդրելով ծանոթանալ և հայտնել կարծիք սնանկության գործով կառավարիչների վերաբերյալ կարգապահական վարույթի անցկացման կարգի վերաբերյալ:
Հանձնաժողովի անդամ՝Ա.Ադամյանը առաջարկեց,քանի որ գրություններում և կից փաստաթղթերում նշված փաստական հանգամանքները խմբավերված են ըստ ՍԳ կառավարիչների, և քննարկվող հարցերը համանման են,ուստի կարելի է կարգապահական վարույթ հարուցելը քննարկել մեկ քվեարկությամբ հարուցել առանձին վարույթներ,իսկ կարգապահական վարույթները անցկացնել ըստ հերթականության և հետո քվեարկել առանձին առանձին:
Հանձնաժողովի անդամները համաձայնեցին առաջարկին:

ԼՍԵՑԻՆ՝
Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝ Տիգրան Հարությունյանը նիստը հայտարարեց բացված և առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել սնանկության գործով կառավարիչներ՝Կամո Հարոյանի,Հենրիկ Մարտիկյանի, Արայիկ Սարգսյանի և Հովհաննես Սողոմոնյանի նկատմամբ «Կարգապահական Հանձնաժողովի գործունեության և ՍԳԿ-ի կարգապահական վարույթի իրականացման» Կարգի 1.4 կետի հիմքով, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:
Ձայնի իրավունք վերցրեց հանձնաժողովի անդամ՝Ռ.Խալաթյանը և արտահայտեց հետևյալ կարծիքը,որ «ՍԳԿԿ» ԻԿԿ-ից ստացված գրություններում և կից փաստաթղթերում առծածվում է նույն արարքը,դա ամուրդների իրականցման ընթացքում սնանկության գործով կառավարիչների կողմից տրված հրապարակային ծանուցումներում/հայտարարություններում/բանկային տվյալների, կամ հատուկ հաշվի համարի չտեղադրելու փաստն է,որը քննարկվել է հանձնաժողովի նախորդ նիստերում և իր կարծիքով պետք է հարուցել կարգապահական վարույթ և վարույթի շրջանակներում քննել կառավարչի գործողությունների կամ անգործության պատճառները:
Հանձնաժողովի անդամները համաձայնեցին այդ կարծիքի հետ:
Հանձնաժողովում նախագահողը հարցը դրեց քվեարկության

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ `
«ՍԳԿԿ» ԻԿԿ-ից 23.05.2018թ-ին և 24.05.2018թ-ին ստացված թիվ 612 և 621 գրությունների հիմքով սնանկության գործով կառավարիչներ՝Կամո Հարոյանի,Հենրիկ Մարտիկյանի, Արայիկ Սարգսյանի և Հովհաննես Սողոմոնյանի գործողությունների /անգործության/,գրություններում և կից փաստաթղթերում նշված փաստական հանգամանքների քննության և վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով,սնանկության գործով կառավարչների վարքագծերի վերաբերյալ հարուցել առանձին կարգապահական վարույթներ:

ԼՍԵՑԻՆ ՝ Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը ներկայացրեց ստացված գրությունները և կից ներկայացված փաստաթղթերը,առաջարկեց խմբավորել ստացված փաստաթղթերը ըստ կառավարիչների և քննարկել հերթականությամբ:Մասնավորապես ներկայացրեց սնանկության գործով կառավարիչ՝Արայիկ Սարգսյանի վարույթում գտնվող «Օլիմպիկ Դե Լյուքս» ՍՊԸ-ի սեփականության իրավունքով գույքի հրապարակային սակարկությունների միջոցով իրացման համար 14.03.2018թ-ին,27.03.2018թ-ին,12.04.2018թ-ին և 07.05.2018թ-ին տրված հայտարարութ- յուններում բացակայում են հատուկ հաշվի բանկային տվյալները,առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել գրությամբ և կից նշված հանգամանքները՝ «Օլիմպիկ Դե Լյուքս» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Արայիկ Սարգսյանի գործողությունների /անգործության/ փաստական հանգամանքները և սնանկության գործով կառավարչի վարքագծի և նրա գործողությունների օրենքին և կանոնակարգերին համապատասխանության նկատմամբ հայտնել կարծիք:
Հանձնաժողովի անդամ ՝Ա.Ադամյանը, առաջարկեց լսել ներկա գտնվող «Օլիմպիկ Դե Լյուքս» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Արայիկ Սարգսյանի բացատրությունները և ուսումնասիրել նրա ներկայացրած փաստարկները,բացի դրանից նա առաջարկեց հերթով հանձնաժողովի նախագահի ներկայացումից հետո լսել բոլոր ներկա կառավարիչների բացատրությունները և քանի որ քննարկման թեման նմանատիպ է բոլոր կառավարիչների մոտ, հանձնաժողովի անդամների կարծիքը սցել ընդհանուրի վերաբերյալ:
Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը ձայնը տվեց, «Օլիմպիկ Դե Լյուքս» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Արայիկ Սարգսյանին,ով մասնավորապես նշեց,որ հատուկ հաշիվը հայտարարության մեջ չի նշվել պատահականության պատճառով,որպիսզի սխալմունքը արդեն ուղղվել է 29.05.2018թ-ին տրված կրկնաճուրդի հայտարարման տեքստում,որի մասին ներկայացնում է գրավոր պատասխան և կից փաստաթղթեր:

ԼՍԵՑԻՆ - Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը ներկայացրեց սնանկության գործով կառավարիչ՝Հենրիկ Մարտիկյանի վարույթում գտնվող ՝Սեյոժա Սաֆարյանի/09.04.2018թ-ից մինչև 30.04.2018թ-ի/; Արայիկ Գուլաբյանի /02.06.2017թ-ից մինչև 30.04.2018թ-ի թվով 10/; «Արամ Սիլվա» ՍՊԸ-ի/12.08.2017թ-ից մինչև 30.04.2018թ-ի թվով 9/; «Արմենֆրուտ»ԱԿ-ի/ 15.02.2018թ-ից մինչև 07.05.2018թ-ի թվով 14/ և Գրիգոր Կարապետյանի /07.11.2017թ-ից մինչև 12.05.2018թ-ի թվով 7/ սեփականության իրավունքով գույքերի հրապարակային սակարկությունների միջոցով իրացման համար տրված հայտարարություններում բացակայում են հատուկ հաշվի տվյալները, առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել գրությամբ և կից նշված հանգամանքները՝ Հենրիկ Մարտիկյանի գործողությունների /անգործության/ փաստական հանգամանքները և սնանկության գործով կառավարչի վարքագծի և նրա գործողությունների օրենքին և կանոնակարգերին համապատասխանության նկատմամբ հայտնել կարծիք:
Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը բացատրությունների համար ձայնը տվեց, սնանկության գործով կառավարիչ՝ Հենրիկ Մարտիկյանին,ով մասնավորապես նշեց,որ իր վարույթում գտնվող համարյա բոլոր գործերով հատուկ հաշիվները բացված են «Արդշինբանկ» ՓԲԸ-ի Վեդի մասնաճյուղում,որտեղ տարիներ շարունակ աշխատելով ստեղծվել են գործորոր սովորություններ հանձինս որևե հատուկ հաշիվի հետ գործառության կարիք լինելու դեպքում կապ է հաստատվում իր հետ և ինքնուրույն անուն ազգանունով գտնում են հաշիվը և մուտքագրում գումարները:Այս տարիների ընթացքում դեռ ոչ մի անգամ չի եղել դեպք որ որևե քաղաքացի կամ ընկերություն չկարողանա մուտքագրել գումար որևե հատուկ հաշվի և բանկը

չոժանդակի այդ գործառույթի կատարմանը:Նշված գործերով հատուկ հաշվները նույնպես բացված են այդ բանկի մասնաճյուղում և բոլոր հայտարարություններում նշված է բանկը առանց հաշվի համարների,քանի որ վերջին 6 ամսվա ընթացքում բանկը փոխել է իր քաղաքականությունը հաշվարկային հաշիվների բացման և դրանց սպասարկման վերաբերյալ և այն հաշվները որոնք վերջին մեկ տարում շարժ չեն ունեցել բանկը ներքին կարգով արգելափակում և այժմ պահանջում են արգելափակումը վերացնելու համար ներկայացնել քաղաքացիների անձնագրի կամ ընկերությունների կանոնադրությունների լուսապատճենները, այն գործերով որ իր մոտ առակա են այդ փաստաթղերը ինքը ներկայացրել է բանկին,բայց նշված գործերով անձնագրերը և կանոնադրությունները առկա չեն և ինքը տանում է աշխատանքներ դրանք գտնելու և բանկին ներկայացնելու համար:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը հարց ուղղեց կառավրչին առ այն,թե ինչքան ժամանակ է որ ինքը ունի այդ պռոբլեմը և եթե չկարողանա լուծել ինչ պիտի անի:

Կառավարիչը պատասխանեց որ հուսով է,որ կլուծի այդ հարցերը կարճ ժամանակում.բայց եթե չլուծվեց,ապա ստիպված կլինի այդ գործերով այլ բանկերում հատուկ հաձշիվ բացել:

հանանաժողովի անդամ Ա.Աղամյանը հարց ուղղեց կառավարչին եթե աճուրդի մասնակից հայտնվի և այդ գործերով հայտարարված գույք ցանկանա գնել ապա նա որ հաշվարկային հաշվին պետք է փոխանցում անի:

Սնանկության գործով կառավաիչը պատասխանեց որ բոլոր գործերով էլ առանձին հատուկ հաշվներ առակա են բանկում և դրանց վրա ցանկացողները կարող են մուտքագրել գումարները, բայց հետագայում պռոբլեմ կլինի դրանց դուս հանումը,իսկ մուտքը պռոբլեմ չէ:

Հանձնաժողովի անդամը երկրորդեց հարցը,որ եթե մուտքագրելուն խնդիր չկա,ապա ինչու հայտարարություններում հաշվարկային հաշվները չեն տպվել:

Կառավարիչը բացատրեց,որ հայտարարություններում չտպվելը կրել է միայն տպագրական սխալմունքի պատճառով որոը կուղղվի մյուս հայտարարությամբ:

ԼՍԵՑԻՆ - Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը ներկայացրեց սնանկության գործով կառավարիչ՝Կամո Հարոյանի վարույթում գտնվող ՝Բարսեղ Բաղալյանի/03.09.2013թ-ից մինչև 16.05.2018թ-ի թվով 56/;«Զանգեզուր տաքսի»ՀՁ ՍՊԸ-ի/20.02.2018թ-ից մինչև 16.05.2018թ-ի թվով 4/; «Ինվեսթմենտ Սթրատեջիք» ՓԲԸ-ի/29.03.2018թ-ից մինչև 16.05.2018թ-ի թվով 3/; Բագրատ Վարդանյանի/06.03.2018թ-ից մինչև 16.05.2018թ-ի թվով 4/ և Ա/Ձ Սամվել Մաղոյանի /18.04.2017 թ-ից մինչև 16.05.2018թ-ի թվով 14/ սեփականության իրավունքով գույքերի հրապարակային սակարկութունների միջոցով իրացման համար տրված հայտարարություններում բացակայում են հատուկ հաշվի տվյալները, առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել գրությամբ և կից նշված հանգամանքները՝ Հենրիկ Մարտիկյանի գործողությունների /անգործության/ փաստ- ական հանգամանքները և սնանկության գործով կառավարչի վարքագծի և նրա գործողություն- ների օրենքին և կանոնակարգերին համապատասխանության նկատմամբ հայտնել կարծիք:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը բացատրությունների համար ձայնը տվեց, սնանկության գործով կառավարիչ՝ Կամո Հարոյանին,ով մասնավորապես նշեց որ իր վարույթում գտնվող բոլոր գործերով հատուկ հաշիվները բացված և առակա են,բայց քանի որ հայտարարությունները տպվում են պարբերաբար և ուղարկվում են իլեկտրոնային տարբերակով և ամեն անգամ նոր հայտարարությունը կազմվում է հինի վրա ամսաթվերը և գումարների փոփոխելու միջոցով,ուստի իր կարծիքով հաշվի համարների չտպվելը կրել է տպագրական սխալի հետևանք է կամ պատահականության արդյունք է,որը կուղղվի հաջորդ իսկ կրկնաճուրդի հայտարարությամբ:

ԼՍԵՑԻՆ - Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը ներկայացրեց սնանկության գործով կառավարիչ՝Հովհաննես Սողոմոնյանի վարույթում գտնվող ՝«Գայանե Ֆ.Ս.» ՍՊԸ-ի,«Արտաշատի բժշկական ուսումնարան»ՍՊԸ-ի; «Նիկել Սար»ՍՊԸ-ի;Ա/Ձ Լիլիթ Ներսիսյանի և Անդրանիկ Արզումանյանի՝21.05.2018թ-ին; 01.04.2018թ-ին; 18.05.2018թ-ին; 18.05.2018թ-ին և 18.05.2018թ-ին,պարտապաններին սեփականության իրավունքով գույքերի հրապարակային սակարկութունների միջոցով իրացման համար տրված հայտարարություններում առկա է նույն

բանկի և հատուկ հաշվի տվյալները,այն է՝«Արդշինբանկ»ՓԲԸ Շենգավիթ մասնաճյուղ,հ/հ 247-3601612250000, առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել գրությամբ և կից նշված հանգամանքները՝ Հովհաննես Սողոմոնյանի գործողությունների /անգործության/ փաստական հանգամանքները և սնանկության գործով կառավարչի վարքագծի և նրա գործողությունների օրենքին և կանոնակարգերին համապատասխանության նկատմամբ հայտնել կարծիք:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը բացատրությունների համար ձայնը տվեց, սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանին,ով մասնավորապես նշեց որ նշված հաշվարկային հաշիվը հանդիսացել է իր անվամբ բացված հաշիվ,որը տարիներ շարունակ օգտագործվել է բոլոր գործերով որպես սնանկության հատուկ հաշիվ,դրա համար բոլոր հայտարարություններում առկա է նույն հաշիվը և բանկը,բայց մոտ 6 ամիս է ինքը իր բոլոր գործերով բացում է առանձին հատուկ հաշիվներ իսկ վարույթները բազմաթիվ լինելով այս գործերով դեռ չի բացել առանձին հաշիվներ,որոնք կբացվեն առաջիկայում և հայտարարություններում կտպվի արդեն առանձին հատուկ հաշիվը:

Հանձնաժողովի անդամ՝Ռ.Խալաթյանը հարց ուղղեց կառավարչին առ այն,որ բոլոր վարույթներում է օգտագործվել նույն հաշիվը և ինչ կարգով:

Սնանկության գործով կառավարիչը պատասխանեց որ տարիներ առաջ բանկը չեր կարողանում բացել հատուկ հաշիվ և բացում էր հատուկ հաշիվը կառավարչի անվամբ,իսկ պարտապանինը բացում էր ենթահաշվի կարգով,որը հետագայում փոխեցին և այդ հաշիվը մնաց որպես միակ սնանկության հատուկ հաշիվ,որը իր կողմից օգտագործվել է մուտքագրված գումարները ըստ պարտապանների հաշվառելու միջոցով,այսինքն ամեն մի պարտապանի համար տարվել է առանձնացված հաշվարկ:Ներկա պահին այդ աշխատավոճը փոխվել է և հատուկ հաշիվները բացվում են առանձին առանձին,իսկ հին գործերում բացվում են նոր հաշիվներ,ուղղակի վարույթները շատ լինելու պատճառով այս գործերով դեռ չի նորացվել հաշիվները:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին հարցը,մասնավորապես հանձնաժողովի անդամ Ա.Աղամյանը հայտնեց այն կարծիքը, որ ներկայացված գրություններում նշված փաստերի և կառավարչների կողմից ներկայացված բացատրությունների համադրումից պարզ է,որ այնուամենայնիվ կառավարչների գործողություններում կան խախտումներ որոնց պահպանման դեպքում կարելի կլիներ խուսափել այսպիսի իրավիճակներից,մասնավորապես ՍԳ կառավարիչ Հովհաննես Սողոմոնյանի գործողություններում առկա է «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի /Թ/ կետի առաջին մասի խախտում,բայց նույն կետի երկրորդ մասը կատարված է ընդհանուր հաշվի միջոցով:Կառավարչը իր գործողությունները չի կատարել բարեխղճորեն և արդյունավետ,որի պատճառով ստացվել է,որ կառավարիչը ապահովել անհրաժեշտ տեղեկատվություն և դրանով չի նպաստել սնանկության վարույթում աճուրդի իրականացմանը ,որը հարիր չէ սնանկության գործով կառավարիչների անվանը և չի նպաստում սնանկության ինստիտուտի կայացմանը և նրա հանդեպ վստահության ամրապնդմանը:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը համաձայնեց արտահայտած կարծիքին և ավելացրեց,որ սնանկության վարույթում պարտապանի գույքի կազմում ներառված գույքը իրացվում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն այն է.

-Պարտապանին պատկանող գույքի վաճառքն իրականացվում է «Հրապարակային սակարկությունների մասին»ՀՀ օրենքով սահմանված կարգով:

«Հրապարակային սակարկությունների մասին»ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի ***՝Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը,*** 1-ին մասի ***՝Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է պարունակի աճուրդի մասին հետևյալ տեղեկությունները,*** 8-րդ կետով՝ ***կազմակերպիչի կողմից սահմանված նախավճարի չափը,ինչպես նաև վճարման կարգը և ժամկետները:***

Տվյալ դեպքում աճուրդի կազմակերպիչ է հանդիսացել սնանկության գործով կառավարիչը և նա իր հայտարարությամբ ապահովել է օրենքի նվազագույն պահանջը,այսինքն հայտարարությամբ նշել է որ վճարումները կարող են կատարել՝**կանխիկ կամ փոխանցումով**:Բայց պետք է նշվի որ բազմաթիվ տարիների ընթացքում ձևավորված գործելաոճի համապատասխան բացի օրենքի նվազագույն պահանջները ապահովելը,կառավարիչների կողմից հայտարարություններում նշվում է նաև հատուկ հաշվի վավերապայմանները,այդ թվում նաև բանկը և հաշվի համարը,որը արդեն դարձել է ընդհանուր, առավել արդյունավետ գործելաոճ:Բացի դրանից «Սնանկության

գործերով կառավարիչների Կոլեգիա»ԻԿ-ի դիտորդ խորհուրդը իր 05.06.2017թ-ի խորհրդի նիստում քննարկել և հաստատել է՝սնանկության գործով կառավարիչների կողմից աճուրդների անցկացման Կանոնակարգը,որի 1-ին հոդվածի *'Աճուրդի մասին հաղորդագրության մեջ նշվում է -ե/սնանկության հատուկ հաշվի վավերապայմանները,որտեղ պետք է մուծվի աճուրդի մասնակցության վճարը և նախավճարը:*

Այսինքն տվյալ դեպքում սնանկության գործով կառավարիչներ՝Ա.Սարգսյանը,Հ.Մարտիկյանը, Կ.Հարոյանը և Հ.Սողոմոնյանը պետք է ուղղորդվեին նշված Կանոնակարգով,որը տեղի չի ունեցել,որը և բերել է այս իրավիճակին,որը և կարող էր դառնալ պատճառ քաղաքացիների շահերի ոտնահարման և հնարավոր վնասի պատճառման:

Հանձնաժողովի նախագահն անդրադարձավ նաև ամեն մի վարույթով հատուկ հաշվի բացման անհրաժեշտությանը և Հ.Սողոմոնյանի բացատրություններում նշված փաստերին և մասնավորապես նշեց,որ իր կարծիքով կառավարչի գործողություններում առկա է «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի /Թ/ կետի առաջին մասի խախտում,բայց քանի որ դրանք մինչ օրս որևե հետևանքներ չեն առաջացրել,այդ խախտումները բոլոր վարույթներում կառավարչի կողմից պետք է անհապաղ և շուտափույթ վերացվեն,ամեն մի վարույթում պարտապանի անվամբ հատուկ հաշիվների բացման եղանակով:

Հանձնաժողովի նախահն համաձայնեց այն մտքին որ սնանկության գործով կառավարիչների կողմից դրսևորված անգործություն-անփութությունը չի բխում սնանկության վարույթի հանդեպ վստահության ամրապնդմանը:

Հանձնաժողովի անդամներ Ռ.Խալաթյանը և Հ.Գևորգյանը արտահայտեցին իրենց կարծիքը առ այն,որ կառավարչները իրենց կողմից կատարված գործողությունների/անգործության/ վերաբերյալ չներկայացրեցին պատճառաբանված և հիմնավորված բացատրություններ,այլ միայն փաստերը պատճառաբանեցին հիմնականում պատահականության և տպագրական սխալի հնարավորությամբ,իսկ դա բավար չէ և իր հետևից կարող էր բերել իրավական հետևանքներ և դառնա արատավոր պրակտիկա:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը հարցրեց հանձնաժողովի անդամներին ըստ էության կարծիքների քննարկմանը ավելացնելու վերաբերյալ և ստանալով բացասական պատասխան եզրափակեց քննարկումը,առաջարկելով՝ սնանկության գործով կառավարիչներ՝ Ա.Սարգսյանի,Հ.Մարտիկյանի, Կ.Հարոյանի և Հ.Սողոմոնյանի գործողությունների կամ հիմնականում անգործության վերաբերյալ փաստերի քննարկումներից պարզվում է որ սնանկության գործով կառավարչների գործողություններում առկա են ձևավորված առկա արդյունավետ ընդհանուր գործելաոճի և «Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա»ԻԿ-ի դիտորդ խորհուրդի 05.06.2017թ-ի նիստում հաստատված՝սնանկության գործով կառավարիչների կողմից աճուրդների անցկացման Կանոնակարգի,1-ին հոդվածի խախտում,որորնք այս օրվա դրությամբ չեն հանգեցրել որևե հետևանքի,այդ թվում հայտարարված աճուրդների չկայացմանը կամ անվավեր ճանաչման,կամ քաղաքացիների աճուրդներին մասնակցելու իրավունքների չիրացմանը, որը իր հերթին չի կարող բխել սնանկության վարույթի հանդեպ վստահության ամրապնդման՝ սնանկության գործով կառավարչի պարտականություններից:Վերոգրյալի հիմքով առաջարկեց հարուցված կարգապահական վարույթների շրջանակներում «ՍԳԿԿ»ԻԿԿ «Կարգապահական Հանձնաժողովի գործունեության և ՍԳԿ նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման»Կարգի 5 հոդվածի 5.1 մասի հիմքով հայտարարել սնանկության գործով կառավարիչներ՝Ա.Սարգսյանին,Հ.Մարտիկյանին, Կ.Հարոյանին և Հ.Սողոմոնյանի նախազգուշացում և սահմանել հայտնաբերված կարգապահական խախտումները վերացնելու 30-օրյա ժամկետ, որից հետո սնանկության գործով կառավարիչները պետք է դիտորդ խորհրդին ներկայացնեն վերացման մասին գրավոր տեղեկատվություն և համապատասխան ապացույցներ:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյան առաջարկը դրեց քվեարկության՝

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

1. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ից 23.05.2018թ-ին և 24.05.2018թ-ին ստացված թիվ 612 և 621 գրությունների և կից փաստաթղթերի հիմքով սնանկության գործով կառավարիչներ՝Կամո Հարոյանի,Հենրիկ Մարտիկյանի,Արայիկ Սարգսյանի և Հովհաննես Սողոմոնյանի գործողությունների /անգործություն/, սնանկության գործով կառավարչների վարքագծերի և նրաց գործողությունների օրենքին և կանոնակարգերին համապատասխանության նկատմամբ հարուցված կարգապահական վարույթների արդյունքներով միջնորդել «ՍԳԿԿ»ԻԿԿ Դիտորդ Խորհրդին՝«Կարգապահական Հանձնաժողովի գործունեության և ՍԳԿ նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» Կարգի 5 հոդվածի 5.1 մասի հիմքով հայտարարել՝

1.1.Սնանկության գործերով կառավարիչ՝Կամո Հարոյանին նախազգուշացում և սահմանել հայտնաբերված կարգապահական խախտումները վերացնելու 30-օրյա ժամկետ,որից հետո սնանկության գործով կառավարիչը պետք է դիտորդ խորհրդին ներկայացնի վերացման մասին գրավոր տեղեկատվություն և համապատասխան ապացույցներ:

1.2.Սնանկության գործերով կառավարիչ՝Հենրիկ Մարտիկյանին նախազգուշացում և սահմանել հայտնաբերված կարգապահական խախտումները վերացնելու 30-օրյա ժամկետ,որից հետո սնանկության գործով կառավարիչը պետք է դիտորդ խորհրդին ներկայացնի վերացման մասին գրավոր տեղեկատվություն և համապատասխան ապացույցներ:

1.3.Սնանկության գործերով կառավարիչ՝Արայիկ Սարգսյանին նախազգուշացում և սահմանել հայտնաբերված կարգապահական խախտումները վերացնելու 30-օրյա ժամկետ,որից հետո սնանկության գործով կառավարիչը պետք է դիտորդ խորհրդին ներկայացնի վերացման մասին գրավոր տեղեկատվություն և համապատասխան ապացույցներ:

1.4.Սնանկության գործերով կառավարիչ՝Հովհաննես Սողոմոնյանին նախազգուշացում և սահմանել հայտնաբերված կարգապահական խախտումները վերացնելու 30-օրյա ժամկետ,որից հետո սնանկության գործով կառավարիչը պետք է դիտորդ խորհրդին ներկայացնի վերացման մասին գրավոր տեղեկատվություն և համապատասխան ապացույցներ:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան